# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ.՝ 77 81 22

N 21/1-259 «21» 02 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀՀ ՈԿ-ՇՀԱՊՁԲ-(11/3)-14/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով, Ս. Մկրտչյանին (հեռ. 010 77-49-76), մինչև 2014թ. մարտի 5-ը, ժամը 11:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեում, 2014թ. մարտի 5-ի, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը, որոնք կազմված են 31 չափաբաժիններից:

Ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցումով):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված ապրանքների այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային

առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջակվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՊԵՏ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման
N ՀՀ ՈԿ-ՇՀԱՊՁԲ-(11/3)-14/1

ք. Երևան "……" ……………. 2014թ.

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ն, ի դեմս պետ _____________յանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և "………………."-ն, ի դեմս տնօրեն ……………ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1. Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե գնորդը վաճառողի կողմից պարտականությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետներում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջին վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է՝ .................... (.................................) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N 1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Ապրանքը Գնորդի կողմից ընդունվելու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ

(Հավելված 2) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված ՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանարի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ

կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցե իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

- սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգովորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է ........... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածները՝ բաղկացած ....... էջից, հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. ԿՈՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| -------------------------------- | -------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
“......” ................ 2014թ. կնքված
N «ՀՀ ՈՍ-ՇՀԱՊՁԲ-(11/3)-14/1»
ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ -ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Տեխնիկական բնութագիր | Մատակարարման ժամկետը ըստ եռամսյակների | | | | Մատակարարման վայրը |
| | | | | | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. | |
| | | | | | մարտ | մայիս | օգոստոս | նոյեմբեր | |
| 1. | Թուղթ A4 ֆորմատի | տուփ | 1000 | Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 95%, խտությունը 80գ/ք.մ.: Փաթեթավորված կամ տուփերով, յուրաքանչյուրում՝ 500 թերթ: | 250 | 250 | 250 | 250 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 2. | Գրիչ գնդիկավոր | հատ | 250 | Գնդիկավոր, հասարակ, 0.7մմ ծայրով, կապույտ գույնի թանաքով | 80 | 80 | 45 | 45 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 3. | Մատիտ | հատ | 50 | Մատիտ սրած, ռետինով 2HB | 50 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 4. | Կոճգամ 1 | տուփ | 10 | Մետաղյա մեխիկներ, գունավոր գլխիկներով, տուփի մեջ 100 հատ | 10 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 5. | Կոճգամ 2 | տուփ | 400 | Մետաղյա մեխիկներ, պլաստմասսե գունավոր գլխիկներով, տուփի մեջ 100 հատ | 100 | 100 | 100 | 100 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 6. | Թղթապանակ արագակար | հատ | 2000 | Թղթապանակ արագակար A4 ֆորմատի, ստվարաթղթե, որակյալ | 500 | 500 | 500 | 500 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 7. | Թղթապանակ ստվարաթղթից կապովի | հատ | 1000 | Ստվարաթղթից , թելով կապովի A4 ֆորմատի թղթերի համար , որակյալ | 250 | 250 | 250 | 250 | ք. Երևան, Իսակովի 29 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8. | Թղթապանակ կոշտ կազմով ATLAS ֆիրմայի կամ համարժեքը | հատ | 80 | Թղթապանակ կոշտ կազմով, A4 ֆորմատի, հաստ, | 40 | 40 | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 9. | Հաշվասարք գրասենյակային CITIZEN ֆիրմային կամ համարժեք | հատ | 10 | Հաշվասարք գրասենյակային, 12 թվային, | 10 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 10. | Կնիք ավտոմատ, ուղղանկյուն | հատ | 10 | Կնիք ավտոմատ՝ նախատեսված ուղղանկյուն կնիքների և շտամպների համար, պլաստմասսե իրանով | 10 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 11. | Կնիք ավտոմատ, կլոր | հատ | 2 | Կնիք ավտոմատ՝ նախատեսված կլոր կնիքների և համար, պլաստմասսե իրանով | 2 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 12. | Մարկեր | հատ | 200 | Մարկեր,գունավոր, նախատեսված պլաստիկ գրատախտակների համար | 50 | 50 | 50 | 50 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 13. | Գրատախտակ | հատ | 30 | Գրատախտակ, պլաստիկ, ուղղանկյուն, կախովի, պլաստմասսե շրջանակով, ներքևի մասում մարկերի և ջնջիչի տեղով | 20 | 10 | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 14. | Սոսնձամատիտ գրասենյակային | հատ | 50 | Սոսնձամատիտ գրասենյակային, 36գ, գլանաձև, կապարիչով | 50 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 15. | Կարիչ միջին | հատ | 20 | Նախատեսված 25-30 էջ կարելու համար, որակյալ | 10 | 10 | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 16. | Սրիչ | հատ | 10 | Սրիչ սովորական մատիտ սրելու համար | 10 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 17. | Շտրիխ | հատ | 50 | Շտրիխ սպիտակեցնող,հեղուկ, վրձնով | 50 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 18. | Դակիչ քանոնով | հատ | 10 | Դակիչ քանոնով, երկաթյա, նախատեսված 10-20հատ թուղթ ծակելու համար | 10 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 19. | Գրքեր կարելու սարքեր | հատ | 3 | Գրքեր կարելու սարքեր, մետաղական հիմքով, նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար | 3 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 20. | Մակաշերտիչներ /լամինատոր/ | տուփ | 10 | Մակաշերտիչներ /լամինատոր/ նախատեսված թղթի լամինացիաների համար | 10 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 21. | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | հատ | 6000 | Թաղանթ 50 միկրոն (ֆայլ) A4 ֆորմատի | 1500 | 1500 | 1500 | 1500 | ք. Երևան, Իսակովի 29 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22. | Ծրար A4 ֆորմատի | հատ | 600 | A4 ֆորմատի, սպիտակ, չափերը 324x229մմ | 600 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 23. | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն | հատ | 100 | Տնտեսական, 48 մմ *100մ, ինքնակպչուն | 25 | 25 | 25 | 25 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 24. | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն | հատ | 300 | Գրասենյակային , 19 մմ *36մ, ինքնակպչուն | 100 | 100 | 50 | 50 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 25. | Թանաք, շտամպի բարձիկ | հատ | 20 | Թանաք կապույտ գույնի, չափագրված 120x80 | 20 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 26. | Նամակի ծրար /մեծ/ | հատ | 500 | Ծրար, նախատեսված նամակի համար 324*229, ինքնակպչուն եզրով | 250 | 250 | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 27. | Նամակի ծրար /միջին/ | հատ | 1000 | Ծրար, նախատեսված նամակի համար 25*17.5 , ինքնակպչուն եզրով | 300 | 300 | 200 | 200 | ք. Երևան, Իսակովի 29 |
| 28. | Նամակի ծրար /փոքր/ | հատ | 300 | Ծրար, նախատեսված նամակի համար 22.5*11.5 ինքնակպչուն եզրով | 200 | 100 | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 29. | Սեղմակ մեծ | հատ | 30 | Սեղմակ մետաղական, լայնությունը 51 մմ | 30 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 30. | Սեղմակ միջին | հատ | 100 | Սեղմակ մետաղական, լայնությունը 25 մմ | 100 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| 31. | Սեղմակ փոքր | հատ | 100 | Սեղմակ մետաղական, լայնությունը 19 մմ | 100 | - | - | - | ք. Երևան, Իսակովի 29 |
| | **Վճարման պայմանները`** | | | Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում `2014թ. | | | | | |

*Ապրանքը չպետք է լինի օգտագործված

**Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը:

ԳՆՈՐԴ

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
“......” ..... .... .............. 2014թ. Կնքված
N «ՀՀ ՈՒ-ՇՀԱՊՁԲ-(11/3)-14/1»
ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու

hասցե___________________________
hh______________________________

hվhh____________________________

Կատարող

hասցե___________________________
hh______________________________

hվhh____________________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«__» «_________» 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____________________ » :

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ » «_____________» 2014թ.

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն, ի դեմս_________________________________________________ և Կատարողն՝ ի դեմս_________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» «_________» 2014թ-ից «__» «_________» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կաատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)

ազգանուն___________________

Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

(ստորագրություն)

ազգանուն___________________

Կ.Տ